

Գ Ա Յ Մ Ա Ն Բ

ՊՈՒԼԱՐԻՍ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ՎԱՐՏԱՍՏԱՆ

Տարեկան 14 Ֆր.

Վեցամսեայ 7 Ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոյ.

Վեցամսեայ 1.50 Տոյ.

ԿԱՆԻՍԿ

ՊԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵԹ.



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Ց Է

Redaction du Journal

«Iraounik»

(Bulgarie) VARNA

Редакция

на ВѢСТНИКЪ

«Ирауникъ»

ВАРНА

Գրութիւնք եւ չեմ
տրոսիր

ՅԱԿՈԲ Կ. ՀՃ. ԿԱՄԱՊԵՏԵԱՆ ՎԱՌՆԱ

ԳԼԽԱՍԻՐ ԳՈՐԾԱԿԱԼ

Սօֆիա քաղաքի Վերականգնութեան
օր երաշխաւորեալ է Պուլկար կառա-
վարութեան:

Առաջին կարգի նոր տոմսերը հասած
են եւ պիտի քաշուին Պոստոս Չէին:
Շահող թիւերու գնարուժը վար-
կեանկան: Պաշտօնեաներու համար վե-
ճարման դիւրութիւն կը տրուի մինչեւ
ամառը:

Բաղդադին փորձել ուզողները ա-
մենայնպէս թեմաթիւ գրին մեզ:

ՀԱՅ ՅԵՂ. ՔՈՆԿՐԵՍԸ

Ա.

Բանի տարիներէ ի վեր բաղ-
ձացուած ու առաջարկուած և
վերջին անգամ Հնչակեան կեդ-
րոնի կողմէ նորոգուած Հայ Յե-
ղափ. Բոնկրէսը մերժուեցաւ Դաշ-
նակցութեան Դ. Ընդհ. Ժողովէն
թերթի քանի մը շաբաթ
ընդհատութիւն պատճառաւ մենք
ուշացանք մեր տեսութիւնը պար-
զելու այդ մասին: Բայց հոգ չէ,
լաւ է ուշ քան երբեք:

Դաշնակցութեան ընդհանուր
ժողովը այդ մասին իր տուած
որոշումներուն մէջ կ'ընդունի թէ
Վուսակցական հողի վրայ տեղի
ունեցած ընդհարումները իրենց
ցաւալի հետեանքներով կը փնա-
սեն համերաշխութեան գործին:
Նոյն ժողովը կ'ընդունի նաեւ թէ
«Յեղափ. կուսակցութիւններու
քոնկրէի հարցը լուրջ նշանա-
կութիւն և գործնական արժէք
կարող է ունենալ այդ գէպքում
միայն, երբ երկուսն ալ բացի դաշ-
նակցական մարմիններէն գոյու-
թիւն կ'ունենան նաեւ Հնչակեան
և այլ յեղափոխական մարմին-
ներու:

Այո՛, Բոնկրէի և համերաշ-
խութեան պէտքը, անհրաժեշ-
տութիւնը ընդունելով հանդերձ,
Դաշնակցութիւնը Բոնկրէի գու-
մարումը ՎԱՂԱԺԱՄ կը համարէ
«ապարդ առարկութեամբ որ»
երկրի մէջ Դաշնակցական մար-
միններէն զատ Հնչակեան և ու-

րիշ Յեղափ. մարմիններ գոյու-
թիւն չունին:

Դրոշակի մէջ այդ մերժողա-
կան որոշումները կարգացող ա-
մեն Հայու դառն ծիծաղը շար-
ժեց սա վաղաժամ բառը: Իբրեւ
թէ Հնչակ. կեդրոնը աճապարեք
է Բոնկրէ առաջարկելու: Դեռ
տարիներ սպասելու է եղբւր՛ Բայց
Դաշնակցականաց այդ ժողովը
քնաւ աճապարանք չի նկատեր
թուրքերու, Բիւրտերու և ուրիշ
օտար տարրերու հետ Բոնկրէ
գումարելու և համերաշխելու ո-
րոշում տալը:

Չենք գիտեր թէ Բոնկրէ քն-
նած հասկցած է թէ երկրին մէջ
թուրք, Բիւրտ յեղափոխական
կողմակերպութիւններ կան և
ատոնք «գործին» նուիրուած ու
վստահելի անհատներ ու խում-
բեր» ունին:

Պարզ է թէ Դաշնակցութիւնը
իբրեւ Հայ կազմակերպութիւն մը
պարտաւոր էր նախ Հայ կազմա-
կերպութեանց հետ համերաշխիւ
և յետոյ տարբեր ու օտար կազ-
մակերպութեանց հետ: Դաշնակ-
ցութիւնը երբ չը գիտեր թէ
երկրին մէջ, բացի Դաշնակցա-
կաններէ, ուրիշ Հայ յեղափոխ.
կազմակերպութիւններ ալ կան,
ինչ որ չուսկեղի ու անհրաժեշտ
իրողութիւն է, երբեք չէր կա-
րող գիտնալ թէ օտար կազմա-
կերպութիւններ կը գտնուին հոն,
որոնք վստահելի անձեր ու
խումբեր ըլլալու առաւելութիւ-
նը ունեցած ըլլան:

Երկրի մէջ ուրիշ Հայ Յե-
ղափոխական կազմակերպու-
թեանց գոյութեան ու վստահե-
լիութեան մասին եթէ իրօք
լուրջ կասկած ունէր, միայն կաս-
կածի մը վրայ հիմնուելով իրա-
ւունք չունէր Մուրատի նման
ամէն կասկածէ վեր եղող ան-
կեղծ հայրենասէրի մը և անոր
ետեւ գտնուող ամբողջ կուսակ-
ցութեան մը Բոնկրէի առաջարկը
մերժելու և ատոնց գոյութիւնը
ու վստահելիութիւնը հրապարա-
կաւ կասկածի տակ դնելու:

Դաշնակցութիւնը եթէ ան-
կեղծօրէն կ'ընդունէր թէ Բոն-

կրէի հարցը լուրջ նշանակու-
թիւն և գործնական արժէք ու-
նին, եթէ համերաշխութեան
ճշմարտագէտ բաղձացող էր, ի-
րեն առջև պարզուած միակ ճամ-
բուն պարտէր հետեւիլ, այն էր
առաջարկուած բաղձացեալ Բոն-
կրէին ներկայանալ և հոն ու
միայն հոն յայտնել իր կասկած-
ները ու տեղեկութիւններ ուզել
և բացատրութիւններ փոխանա-
կել: Այդ պարագային ապահովա-
պէս պիտի տեսնէր թէ երկրի
մէջ, Տաճկահայաստանի մէջ, Դաշ-
նակցականներէ շատ աւելի մեծ
թիւ կը կազմեն տարբեր Հայ
յեղափոխ. կազմակերպութեանց
վերաբերողները:

Մենք կը կարծենք թէ Դաշ-
նակցութիւնը գիտէր այս և գիտ-
նալով հանդերձ չը գիտնալ ձե-
ւացուց որպէս զի Բոնկրէէն խու-
սափելուն պատճառ մը ցոյց
տուած ըլլայ:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

—*—

Մեծ պետութեանց վեհապետ-
ներուն և նախարարներուն սա
վերջերս իրարու յաջորդող տե-
սակցութիւնները բնականապէս
պարզ հանդիպումներու կամ զու-
գադիպութիւններու չէ կարելի
վերագրել, ոչ ալ լոկ բարեկա-
մական այցելութիւններ նկա-
տել:

Մինչ Լահէյի խաղաղութեան
համաժողովը տակաւին իր նիս-
տերը կը շարունակէ և բոլոր
մեծ ու փոքր պատուիրակները
առիթ ու պատահութիւն ունին
իրենց պատկանած կառավարու-
թեանց շահերը պաշտպանելու և
առաջարկներն ու բաղձանքները
միջազգային սեղանին վրայ դը-
նելու, ի՞նչ հարկ կը ստիպէ մեծ
պետութեանց վեհապետները ու
նախարարապետները որ այսչափ
փութկոտութիւն ցոյց տան ան-
ձամբ զիրար տեսնելու և խոր-
հրդաւոր ժամադրութիւններ ո-
րոշելու: Խորին ուշադրութեան
առարկայ պէտք է ըլլայ թէ եւ-

րոպական վեց մեծ պետութիւն-
ներէ և ոչ մին բացառութիւն
կազմեց այս փութկոտ տեսակ-
ցութիւններուն մէջ նոյն իսկ
իր պալատի պարտէզին մէջ հանդ
ու սարսափով և հազար զգուշա-
ւորութեամբ հազիւ պարտիլ կըր-
ցող Չարը երկար ճամբորդու-
թիւններ ընել ստիպուեցաւ: Հե-
տեաքար դիւրին է մակարերել
թէ քաղաքական կարևոր նկա-
տումներ զսպանակը եղած ըլլան
մեծ պետութիւններու վեհա-
պետները ու ներկայացուցիչնե-
րը հոս ու հոն մղելու:

Եթէ ենթադրենք թէ լոկ
խաղաղութեան պահպանումն էր
անոնց մտահոգութիւնը, այդ
կրնային ապահովել սա Լահէյի
համաժողովին միջոցաւ: Բայց
ընդհակառակը, անոնք հոն ըզ-
գուշաւորութեամբ ու վերապա-
հութեամբ վերաբերուեցան և
մէջ տեղ նետուած են կարևոր
խնդիրները, որպիսին է սպառա-
զինման սահմանաւորումը, միայն
բաղձանքի ձևով սեղանի վրայ
դրին ու պղտունական խօսքե-
րով և անգործնական արտայայ-
տութիւններով վրան գոցեցին:
Այդ խնդրոյն մէջ մանաւանդ
Չարի ներկայացուցիչ Մ. Նելի-
տովի, որ Համաժողովին նախա-
գահն ալ էր, գիրքը շատ զա-
ւեշտական էր: Յարաճուն սպա-
ռազինումը պետութիւններու
նիւթապէս կործանման և ժողո-
վուրդներու թշուառացման միակ
պատճառ ցոյց տուող և այդ ա-
ղէտաբեր պատճառը մէջտեղէ
վերցնելու նպատակաւ՝ Խաղա-
ղութեան Համաժողովը հրաւիրող
Չարին ներկայացուցիչը այս ան-
գամ իր գիրքը ու կարծիքը փո-
խած էր բոլորովին և չէր ուզեր
գործնական ելք մը տալ այդ
էական խնդրոյն, առարկելով թէ
Չինի դէպքերը, Թրանսվալիա ու
Մայր. Արևելքի պատերազմները
գաղթավայրերու կռիւները ու
դիւանագիտական դժուարութիւն-
ները հարկադրած են ինչ ինչ
պետութիւններ իրենց սպառա-
զինումը աւելցնելու: Պետու-
թեանց սպառազինումը պակսե-

ցնեւու համար նախ համաժողով հրաւիրողը այս անգամ ելաւ սպառազինութեամբ աւելցնելու պէտքը մատնանշեց հանդիսաւորապէս՝ եթէ նէ իրողով պարզ անհատ մը ըլլար, կամ խենթեցած մը եւ կամ փոփոխամիտ ապուշ մը պիտի նկատուէր։ Սակայն իրողութիւնը այն է որ ներկայումս ներհուն դիւանագէտ մըն է և ամբողջ Ռուսիան և ասոր զինակից ու համախոհ մեծ պետութեանց այսօրուան քաղաքականութիւնը կը ներկայացնէ։

Հետեւեալը այլևս, մանաւանդ սպառազինման խնդրոյն այս զաւեշտական դարձուածքէն յետոյ, կրնանք ըսել թէ մեծ պետութիւնները կուզեն բոլորովին վիժեցնել Լահէյի Համաժողովը, ու ասորին իրենք, կրկին այդ մեծ պետութիւնները, կը փութան իրենց մէջ համաձայնութիւններու գալ կայսրներու և նախարարներու փութկոտ տեսակցութիւններով, իբր թէ համաշխարհային խաղաղութիւնը պահպանելու բարիկամեցողութեամբ։

Բայց բուն իրողութիւնը այն է որ եւրոպական մեծ պետութիւնները փոքր երկիրներու ու իշխանութեանց վրայ իրենց գերիշխող դիրքը պահպանելու մտահոգութեամբ տանջուել սկըսած են, և այս պատճառաւ չեն ուզեր Լահէյի Համաժողովին մէջ այնպիսի որոշումներ ընդունել որոնք կրնան կաշկանկել իրենց ձեռքերը աշխարհակալութեանց մէջ և իրաւարարական միջազգային ատենին տուլ զիրենք փոքր պետութեանց դիրքին հաւասար դնել։

Ահա այս ետասէր, չահա՛մով ու փառատենջիկ մտահոգութիւնը եղած է այն զապանակը որ մեծ պետութեանց վեհապետները մղեց այս միջոցիս իրարու հետ խորհրդաւոր տեսակցութիւններ ունենալու։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆԱՄՆԵՐԸ

Ամերիկայի մէջ կաղմուած Հայաստանի բարեկամներու Միութեան քարտուղար Օր. Ալիս Սթոն Պէթուէլ տեղական թերթերու հետեւեալ նամակը տուած է։

Մարգարի Բոսթը,

Տէր — Անարտայայտելի ցաւով ու ցասումով կարդացի թէ Թաւշանձեան սպաննուած է՝ Հայ յեղափոխական ընկերութիւններէն մէկուն դրա մագէս նշանով մերժած ըլլալուն համար։ Վստահ եմ որ ատ պիտի խոցէ զդաճուածը՝ Հայեթու բարեկամ բոլոր Ամերիկացիներուն, Մեր տնտեսութիւնը այնքան խորունկ է որքան անկեղծ հայ ժողովուրդին համար մեր տածած չահագրգռութիւնը։

Պրն. Թաւշանձեան նիւ Եօրթի լաւագոյն հայերէն մէկն էր յարգուած բոլոր զինքը ճանչցողներէն եւ առաջածեան նուիրատու մը, չատ մը բարեկամական գործերու, որոնք կապ ունէին հայ ժողովուրդի բարորոշեան հետ։

Անկա տեսած էր՝ ինչպէս ամեն մտաքի մարդ պարտի տեսնել թէ Սուլթանին կառավարութիւնը զգուշի է, թէ ան կը հրամայէ ջարդերը, կը քաշալերէ Հայոց դէմ գործուած ամեն տեսակ խժժուութիւններ, եւ թէ Հայերը անոր լուծէն ազատելու համար եղած յեղափոխութիւն մը օրհնութիւն մը պիտի ըլլա՛ր՝ եթէ երբէք կրնար յաջողիլ։

Բայց անկա կը հաւատար թէ ներկայիս Թուրք ուժը չափազանց զօրաւոր էր, եւ թէ անյաշու փորձեր աւելի մեծ խառնութիւններու դուռ պիտի բանային միայն։ Նոյնը կը խորհիմ նաեւ ես, եւ ատիկա է նոյնպէս գաղափարը գրեթէ բոլոր Ամերիկացիներուն, որոնք բարեկամ են Հայերուն։

Պրն. Թաւշանձեան կրնար ուղիղ կամ սխալ եղած ըլլալ այդպէս մտածելով, բայց անկա պարկեշտ էր իր հաւատքին մէջ եւ չէր կրնար՝ ձեռքը խղճին վրայ դրած՝ իր դրամը տալ հոն ուր կը խորհէր թէ անկա աւելի չարիք առաջ պիտի բերէր քան թէ բարիք։

Անտարակոյս Պրն. Թաւշանձեան կը հաւատար նաեւ թէ՛ եթէ յեղափոխութիւն մը կրնար յաջողիլ ո՛ր եւ է պարագաներու տակ, անկա չէր կրնար յաջողիլ վարչութեան տակ մարդերու։

որոնք դրամ հանելու համար պիտի մեղքի եւ մարդասպանութեան պէս անխիղճ եղանակներու եւ միջոցներու դիմած էին։

Մերժելով դրամ վճարել՝ անկա թէ՛ իր պարկեշտութիւնը եւ թէ իր քաջութիւնը ցոյց տուած էր։

Անձնապէս՝ կը խորհիմ թէ աշխարհի մէջ բոլոր ունեցածս պիտի տայի, եթէ ատիկա պիտի կրնար ազատութիւն տալ Հայաստան, բայց մէկ սէնթ անգամ պիտի չի տայի մարդոց, որոնք կը սպառնան սպաննել աս ու ան, պարզապէս որովհետեւ ասոնք դրամ չեն տար իրենց չի հաւատացած գործին։ Այդպիսի մարդիկ խիղճ չունին եւ պէտք չէ վստահիլ թէ տնոնք դրամը պարկեշտօրէն կը ծախսեն։ Շտա հաւանական է թէ այդ դրամին ոչ մէկ տոլարը Հայաստան պիտի հասնէր երբեք։

Կարեկցութիւն միայն կը զգամ այն խեղճ ու տգէտ աղուն համար՝ զոր աւելի վարպետ ու աւելի անձնաւէզ գաւաղիւններ գրգռած էին զէպի գործադրութիւնը այս ահուկ ոճիւրին, այն պատրանքով թէ այդ գործը պիտի օգնէր իր հարստահարեալ հայրենիքին, մինչդեռ իրողութիւնը այն է թէ անկա նախատեսքով ծածկեց հայ ահուկներ։

Այդ գաւաղիւնները առաջ ջնջին զանի այդ աղտոտ գործը կատարելու եւ իր պատիժն առնելու, մինչդեռ իրենք մոլորին մէջ կը ծածկուին իրենց գրգռանքները լեցնելու, եթէ երգէք պատահի որ ուրիշ վաճառականներ՝ Թաւշանձեանի սպանութեան անարեւակա՛ծ ստիպուին վճարել իրենց պիւլմիլը։

Կը յուսամ թէ արդարութիւնը պիտի գտնէ զանոնք եւ օրէնքին լիովին պատիժը պիտի տայ անոնց։

Գիտեմ թէ երեք հայ յեղափոխական ընկերութիւններէն իւրաքանչիւրին մէջ կան ազնիւ ու անկեղծ անհատներ, եւ ես անոնց մէջ ունիմ մէկ քանի սերելի բարեկամներ։

Բայց կը խորհիմ թէ ամէն պարկեշտ հայ պէտք է ետ քաշուի այն ընկերութեանէն, որուն անդամները մահ սպառնացած են Թաւշանձեանի եւ որուն պաշտօնական օրկանը՝ անցեալին մէջ՝ ջատագովը կը հանդիսանար այդ օրինակ արարներու։

Միս Ալիս Սթոն Պէթուէլ

Քարտուղար Ֆրէնչիս օֆ Արմիլիտի

ՈՃՐԻՆ ԱՌԹԻԻ

Ողբացեալ Յ. Թաւշանձեանի սպանման մասին Ղեւոնդ վարդապետ Մարգուկէսեան ծանրապէս ամբաստանուած ըլլալով, Ամերիկայի առաջնորդ Տէր Սարաճեան եպիսկոպոս հեռագրաւ խընդրեր էր վեհ. Կաթողիկոսէն որ կարգաւորէ ընէ զանի։ Սարաճեան էլ միաձնէ սա պատասխանը ստացած է։

«Ձեր պահանջին համաձայն Մարգուկէսեանը կարգաւորած ըրած ենք։

Մկրտիչ Կաթողիկոս
Ամենայն Հայոց»

Այժմ Ղեւոնդ վարդապետ կը կրէ իր նախկին անունը, Կարապետ Մարգուկէսեան։

Ըստ Հայրենիքի, Մարգուկէսեան ինքզինք խաբուած կը նկատէ եղբի վեր. Հնչակեան պարագլուխ Արզուանէն, եւ կը յուսացուի եղբի որ ամեն բան խոստովարէ։ Մարգուկէսեան ընդհ. դատախազէն կամբաստանուի երկու աւագակութեան եւ երկու դրամաշորթութեան համար։

Նիւ Եօրթի մէջ Մկրտիչ Գալուստեան անունով երկաթագործ մը խոստովաներ է Ընդհ. դատախազին թէ իր վեր. Հնչակեան եղած էր ու իրեն հրամայուած էր երկու սպաննութիւններ կատարել. ինք գիտէ թէ 5 հոգիէ արտասահման խրկուեցան ըսպանութիւններ կատարելու համար։ Ան իր հրամայները կը ստանայ եղբի Մարգուկէսեանէ, եւ գիտէ նաեւ թէ Արիկ էֆ. Ունձեանը սպաննող վարդապետը Ամերիկայէն մեկնելէ առաջ շատ անգամներ խորհրդակցած է Մարգուկէսեանին հետ եւ կը հաստատէ որ Մարգուկէսեան կապ ունի հայ հարուստներու սպառնական նամակներ զիկուելու գործին հետ։ Գալուստեան լսելով մը անգամ Մարգուկէսեանին հետ այցելած է հայ հարուստներու գրասենականները դրամ հատեցելու համար։

Ամերիկայի թերթերը կը գրեն թէ Տ. Մ. Արշակ. որ երեք շաբաթ առաջ Ձայն Հայրենեացի խմբագիրն էր (Ար. զուեան-Մարգուկէսեան խմբակի տեղակալն է այդ թերթը) վերջիս նիւ Եօրթ գտնուած պահուէն բոլոր իր գ/տցածները հաղորդած է աստիկանութեան։

Մարգուկէսեանի պաշտպանողականը այն պիտի ըլլայ եղբի թէ ինքը դրամները «անկեղծ համոզումով» հաւաքած է հայրենասիրական եւ բարեգործական նպատակներու համար եւ յանձնած է Արզուկեանին։

ԱՌԱՋԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՌԱՋԱԿԱՊԵՏԸ

(Շար. նախորդ թիւէն)

Այդ վերջին բառը կոկորդէն ելաւ չ'ելաւ, ահա՛ շարժում մըն ալ ըրաւ ու գլուխը թողուց ըստ իր վրայ։

Մամիկն ու փոքր աղջիկը սկսան արտասուել. իսկ Աւագակապետը ծոցէն անց Մաշտոցը, ծունկի չորեցաւ ու սրտաբուզի աղօթք մը մըմընջեց։

Յետոյ եկաւ գիւղին Տէր Մուրաա քահանան, որ դեռ երթտասարգ կ'երեւար։

Մեծ հանդէսով թաղումը կատարեցին։

Աւագակապետը կանչեց իր քով Տէր Օհանի քոյրը, Աննա խաթունն ու ըսաւ։

— Կը տեսնեմ որ Տէր Օհանի երկու որբերուն պաշտպանը դուն պիտի ըլլաս ասկից ետքը։ Աստուած անոնց ծնողքին կեանքը քնդի տուաւ։ Արդ եղծին պարտականութիւնը կատարելու համար կը յայտնեմ թէ եղբայրդ հարբելը ոսկիի գումար մը յանձնած է ինձի . . . ատիկա քու ձեռքդ տակ պիտի դրուի . . . նայէ որ քա եկեթիմնե՛րը խեղճ չը մնան։ Անոնք վերն՝ Աստուած ու վարձ՝ քու ձեռքդ պիտի նային . . .

Ու գրպանէն հանելով այդ գումարը Մամիկին տուաւ. իսկ ինքը մեկնեցաւ։

Գիտէր թէ այդ շաբթուն պարսիկ կարաւանները վերջացուցած էին գործերին ու պիտի վերադառնային։ Յարմար էր իրեն՝ որ անոնց հետ Պարսկաստան երթար։

Կանացու մընէ, եւ թէ՛ անկա երկընքէն իջած մէկը չ'է . . . Անկաբելի է . . . Այն մարմնացումն, որուն մէջ կապրի ինքը, բառին բովանդակ նշանակութեամբ պաշտելի է ինձի։ Չեմ գիտեր, պիտի ըլլայ մէկը, որ հոգիիս ու սրտիս մօտիկ ընեմ, որ քան պարտական եմ հայրդ լինելու։ Գիտեմ միայն հողն անգամ անոր անունը վերջին օրհնեց մը պիտի ընէ։

— Անոր համար, քոյր իմ, կը միջամտէր գեղանի Լուսիս, աշխարհքը, արեւը, կեանքը, ամէնն ալ բռնութեան մէջ մարմնացած են։ Ախ, չը գիտես անոր անցեալը . . . անկա ինչի՞նք տեսած է եւ ինչի՞նք ալ քաշած է . . . Իր բովանդակ կեանքին մէջ օր մը, ժամ մը, վերջապէս վայրկեան մը չէ եղած, որ հանդարտ ու խաղաղիկ միջոց մը գտնէ . . .

Անկա մեր փոթորկալից հայրենիքին ամբողջ թշուառութիւնը կրած է . . . անոր ո՛չ գիշերը՝ գիշեր եղած է եւ ո՛չ ալ ցիւրեկը՝ ցիւրեկ։ Նուրբմէ՛, մի-

Արգուեան փախած ու պահուած է. ինչ որ կ'ապացուցանէ թէ եթէ մէջ-տեղ ելլէ ինքզինք արդարացնելու միջոցներ կը պահանջէ իրեն: Արգուեան եթէ այդ արդարացուցիչ միջոցները ունենար, բնականապէս իր խմբակին եւ վեր- Հնչակեան այդ հարուածին վարկը ու զիրքը փրկելու համար պարտէր մէջտեղ ելլել:

Ոճրագործ խմբակի կողմէ սպառնա-կան նոր նամակներ ալ դեռ դուրս կուգան: Ազգ շարժաթերթի թմբա-գիր Տ. Սուրէն Պարթեւեան ստացեր է հետեւեալ սպառնադիրը.

«... Սուրէն
«Հայ անտարբերները շանսատակը-նող Պետրոսներ դեռ չատ կան: Եթէ շտրունակէք ձեր... անկանգն-լիօրէն շտնաստակ կ'ըլլաք: Մահ, մահ, մահ. սատակում վատերուն: Արիւն»

Տ. Սուրէն Պարթեւեան Ազգ թեր-թին մէջ քաջարի պատասխան մը կու-տայ այս սպառնադիրն ու սպայէս կը վերջացնէ «Արիւն կ'ուզէք: Մօսքի հերոսութիւն չի ծախենք, բայց ի միտս պատրաստ է ձեզի համար: Ու այնքան աւելի յօժար եմ զայն տա-լու, որքան համոզուած եմ, թէ ան միայն կրնայ արմատական բարձումն սպանովել ոճրագործ չարիքին»:

Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Ք

Պաւստոյ մէջ փաստաբաններու, բը-ժիկներու, ուսանողներու գործա-դուլներէն յետոյ, այս անգամ ալ քա-հանաներու գործադուլ կը լսուի:

Հոն Օրթոտքս քահանաները պե-տական գանձէն թողակ ստանալէ դատ ծուխներէն ալ որոշ տուրքեր կը ստա-նան: Դիւղացի հասարակութիւնները թշուառ ու աղքատ վիճակի մը մատ-նուած են: Թորիտ գաւառի մէկ գիւ-ղին մէջ գիւղացիք նկատելով թէ ի-րենք հաց չունին, քահանաներուն տուրքը կը պակսեցնեն: Բայց ասոնք անմիջապէս եկեղեցական գործադուլ կը յայտարարեն ու կը գոցեն եկեղե-ցիին դռները: Տասնեւհինգ օրէ ի վեր է որ այդ վիճակը կը տեւէ. եռ-կու կողմի ալ զիջանելու տրամադիր չեն:

— Երկար տարիներէ ի վեր Անգ-լիոյ մէջ յուզուած այն խնդիրը թէ՛

այն դուռն չէն... շատեր կան ա-նոր կեանքին համար աղօթողներ... Բայց թողունք այս խօսակցութիւնը: Հաւատանք որ Աստուած անոր քայլե-րը կ'առաջնորդէ: Ես պիտի խնդրէի որ անցեալ օրուան երգի անգամ մըն ալ ըսէի ինծի: Ետ քաղցր է այդ երգը... Հոգեւ կը թրթռայ երբ կը լսեմ:

— Ի՞նչու չէ՛, քոյրս, ուզածդ ըլ-լա՛ւ:

Ու Նուրիմէ ձեռքը մեղմադձոտ աշտին տարաւ եւ խորին տրտմու-թեամբ մը սկսաւ հետեւեալ երգը մըր-մընջել:

«Արտիկ մ'ունէի՛ք փթթած վարդի պէս, Ձը մնաց ինծի...»

«Ի՞նչու թափեցի աղուոր աչքերէս Շիթերն արցունքի:

«Ես մէկուն գուժը չարժիլ չը կրցայ, Այնարհքս վրայ...»

«Կը թօշնի՛մ մենիկ՛ իմ ցաւերու: մէջ Այսպէս ամփոփուած:

«Թո՛ղ մթնի ախարհքս, թո՛ղ անցնի կեանքս

Իրմով դառնացած:

մարդ ի՞նչ կրնայ իւր քենին հետ ա-մուսնանալ, վճռուեցաւ վերջապէս հաստատական կերպով: Երեւոյթ, ժո-ղովը ձայներու մեծամասնութեամբ ընդունեց քենին հետ ամուսնաւալու օրինագիծը:

— Հնդկաստանի նախարար Մր. Մօրլի ըսաւ Անգլ. Խորհրդարանին մէջ թէ Հնդկաստանի կառավարիչին հող-մէ հրատարակուած տեղեկագրի մը նայելով, ժանտախտէ մեռնողներուն թիւը եղած է Հնդկաստանի մէջ 1896էն մինչեւ 1907 մայիս 5, 402, 245:

— Իտալական թերթ մը կը գրէ թէ Նափոլիի Ֆրանչիսկեան վանքին ա-ղօթասաց վարդապետը Պէնէտէթթօ ի մէջ ուրիշ կարգ մը անամօթ ա-րարքներու հանգէպ ջերմեռանդ ըն-տանիքներու ու աղջիկներու, վերջին անգամ աւելի ծանր ոճիւր մը գործեր է իր դասակից Բեռնարդին մեղսակ-ցութեամբ, այսպէս. 'Ինքուստի աղջիկ մը խոստովանութեան ատեն կը յայտ-նէ թէ վիրարութեան գործողութեան մը պէտք ունի եւ կը քաշուի բժիշկ-ներու զննութեան յանձնել իր մար-մինը: Խոստովանողայրը կը համոզէ պարկեշտ աղջիկը որ վանք գայ եւ հոն մասնագէտ ու գաղտնապահ քահանայի մը միջոցաւ ինք կատարել կուտայ գործողութիւնը մեծ զգուշաւորու-թեամբ: Ինչո՞ք աղջիկը ծուղակը կ'իյ-նայ: Վանք երթալէն վերջ վարդա-պետները աղջիկը թմբեցնելով, վայ-րագորէն կը բռնաբարեն: Այս գայ-թակղութիւնը ժամանակ մը գաղտ-նի մնալէ յետոյ այժմ երապարակ գրուած է:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցին նոր հոգաբարցութիւնը կազմուած է հետեւեալ անձերէն.

- Տ. Յարութիւն Ասլանեան
- « Մարթէն Յակոբեան
- « Արշակ Գարակէօզեան
- « Աբաէն Արսէնեան
- « Տօք Տիգրան պէյ Աճէմեան
- « Տիգրան Մանուկեան
- « Տօք Սիմոն Սեղրոսեան
- Բաւեմաղթելի է որ այդ նոր

«Ես չ'եմ սպասեր անկից ինձ համար Ո՛չ, դու, ո՛չ դադար...»

Աւագակապետը չը կրցաւ դիմանալ: Բացաւ դուռն ու ժպտելով ներս մտաւ: Երկու սիրտունի աղջիկները շուտով մը Աւագակապետին գիրկը նետուեցան ու համուրհեցին զինքը:

— Ի՞նչպէս է, ք. դաւանի՛րս, հար-ցուց Սեւակակապետը:

Ետ աղէկ ենք, հայր պատտօտա-նքին Լուսիա եւ Նուրիմէ:

— Աստուած աւելի աղէկ ընէ՛... յարեց Սեւակակապետը գորովայն ձայ-նով մը:

Բանի մ'որ միտք անոնց քով: Միշտ զուարթ բաներու միայն խօսեցաւ ու աղուոր պատմութիւններ րրաւ: Կար-ծես թէ այն ինքներու ժայռին եղէն փոթած Աւագակապետը չէր, այն մը-ռայ ու անժպիտ կերպարանք ունե-ցող մարդը չէր, մէկ խօսքով այն հո-գեկան դառնութիւններու մէջ ընկ-նուած ֆաթիւր չէր, այլ երջանիկ ու բաղդաւոր արարած մըն էր, որուն նայուածքը ճառագայթ մըն էր... Ետաթէ մ'ետքը Նուրիմէյր ձեռքը

ՕԳՏՈՒԵՑԷՔ ԱՌԻՐԷՆ

Հասան մեզ մեծ քանակութեամբ նոր առնուած

ՀՈՅԵՐԷՆ ԿՐԱՄՕՅՕՅԻ ՓԼԱԳԱՆԵՐ

Փութացէք ապահովել Ձեզ վաճառումը այս նոր փաշա-ներու Ձեր նահանգին համար:

Մեր փաշաներու ցուցակները հայերէն, տաճկերէն եւ զանազան եւրոպական եղանակներու կ'ազարկենք ձեր փա-փաքողաց:

Հեծելանիւի, կրամօֆօնի եւ պէնզին լամպներու վրայ մի տաք ապսպրանք ուրիշ տեղ նախ քան մեր ցուցակները աչքէ անցնելու:

Ն. ԱԼԵԱՆԱՔ Է ՅԻ ԾԵՐՈՒՆԵԱՆ — ՌՈՒՍՅԱՐՔ ԳՈՐԾԱՐԱՆ ՀԵՄԵԼԱՆԻՒՄ ՄՐՈՆԵՐՍ

Հոգաբարձութիւնը ազատէ Ազգի Տունը ու իր սեփականութիւն-ները կարգ մը անհատներու շա-հագործումներէն:

— Սեքսատիսյ առաջնորդ ըն-տուեցաւ Տ. Թորգոմ Թ. Վրդ. Գուշակեան:

— Գարակէօզեանի կտակած դը-րամովը կառուցանելի Որբանոց-Արհեստանոցին յատկապէս լին-անգամ մըն ալ պիտի պատրաստ-ուի ձեռնհաս հարպետական ճար-տարապետ-երկրաչափներու մի-ջոցաւ: Այս անգամ պատրաստուե-լիքը կեդր. Վարչութեան կողմէ ընդունուելէ յետոյ շինութեանց պիտի ձեռնարկուի որպէս զի մինչեւ յառաջիկայ տարուան վեր-ջերը աւարտի կառուցումը և հոն փոխադրուին որբերը:

Թ. ՊԱՌՄԱՃԵԱՆ—ՍՕՅԻԱ Կիսաւոր Գործակալ

Սօփիա քաղաքի վիճակահա-կոնքեալ տնտեսուհի

Նաեւ կը գնէ ու կը վաճառէ իր եւ ուրիշներու հաշւոյն ասեւ տեսակ արժէթուղթեր:

10—4

րոնեց ու հարցուց:

— Ինծի նայէ՛, Նուրիմէ՛, մի՛ Ծած-կիր... կարօտ մ'ունիս... րա՛հ:

— Ե՛ս... մըմնջեց մանկամարդ աղջիկն՝ որուն աչքերը լեցուեցան:

— Այո՛, դուն:

— Ի՞նչ կարօտ կ'ընամ ունեւալ, Հայր:

— Ձուներս մէկը... :

— Ինչպիսի՞ մէկը:

— Ազգական մը... Իրեւի մը...

... սանկ սրտից մօտիկ մէկը... :

— Ո՛հ, ծնողքէս դրկուած ոլլուլ գիտէք. կը մնայ ինծի մօրաքոյր մը...

... այսպիսի

— Ո՛ր կը գտնուի ան:

— Ի՞մ հոն եղած տանէս կարինի մէջ կը բնակէր. բայց հիմա չեմ գի-տել:

— Ի՞նչ է մօրաքոյրդ անունը... :

Ի՞նչ մականունով կը ճանչցուի:

— Անունը Նուրիկ է. իսկ մական-ունն ինչ Մէլիքեանց կը կոչուի:

— Մօրաքոյրդ մի՛նակ է:

— Այո՛, կարինի առաջին կոնք

ԱՄԻՐԻԿԱՆԵԱՆՑԻ ՈՒՑՈՒՄԵԱՐԱՆ

Նոր տարեշրջանը կը սկսի Սեպտ. 3-ին փափաքողները թող դիմեն Տնօրէնին Օգոստ. 15-31: Ուշացողներուն համար մօտեւոր պայմաններ պիտի ըլլան: Վերա-քննութիւնները կը կատարուին Սեպտ. 1-ին: — Մանկապարտէզ ևս պիտի աւելնանք:

ԱՄ. ԱՄԻՐԻԿԱՆԵԱՆՑ:

ԾԱԽՈՒ ԳԻՐԳԵՐ

ՓԱՌՊԱՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր.

» Բ. » (433 էջ) 2 ֆր.

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄԲՄՈՒՆՔ ՀԱՅԱԿԱՆԵՐԿՐՈՐԴ անդամ տպագ-րուած եւ ճոխացած: Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկար-ներու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը, անոնց ազատու-թեան տառ. Գին 50 ամագիւծ

ՀԱՅԻՆԵԼԻԿԱՆ ԶԱԶԵՐ Պատկեր

մը Տաճկահայաստանի իրազան կեանք-էն: Չեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը անանաչու համար գիմեղ ՎԱՌՆԱ «Իր. աւ. ու. ղ» ի խմբագ-րութեան

տեղի ունեցած ատեն անոր մէկ հա-տիկ գաւաղը սպաննուեցաւ: Իսկ ա մուսինը շատ աստի կ'ըլլայ սր մե-ռած է:

— Աղէ՛կ, Նուրիմէ՛, ձիմակ անոր կարօտը չես քաշե՛տ:

— Հապա չեմ քաշեր... դողդը-ղաց Նուրիմէ եւ սրբեց աղուոր այտե-րու վրայ յորդող արցունքները:

— Կ'ուզե՛ս անոր քով տանիմ քեզ:

— Ա՛խ, չէ՛... :

— Պատճա՛ռը:

Նուրիմէ տփուռեցաւ... անոր կերպարանքը յանկարծ անանկ դառ-նութիւն մը պատեց. որ չը նկարա-գրուի: Գլուխը կախեց կոնքերին վը-րայ ու ջանաց հոգւոյն ամբողջ հեծ-կըլտանքը զսպել: Ո՛հ, չը կրցաւ մէ-կէն ի մէկ պատասխանել... չը կրցաւ յայտնել թէ ի՞նչու չէր ուզե-ր քեզ ինչ քաղաքի ուր ինկած էին իր ծնողքը, ուր կը բնակէր իր սիրելի մօրաքոյրը, ուր իր հոգիին մօ-տիկ ազգականներ կային:

(Շարունակելի)

ՀԱՎԱՏՈՒՄ

ԹԻՒՐԿԻԱ

— Ճոճա կիւնիւ սէլամըզ րէսմիստէն սօնրա Ֆրանսըզ էլ-չիսի Մ. Գօնսթան Սուլթանըն հուզուրընը չըզսւլ. ճոճահուրիյէթ րէսմիս Մ. Ֆալիէրին մախ-տուժը Մ. Անտրէ Ֆալիէրի թող-տիմ իթտի Պու միւնասիպէթլէ Սուլթան Մ. Անտրէէ իքինճի Մէճիտիյէ նիշանը իհտա իթտի Անլէրտէն սօնրա իթալիա վէ Բուճանիա Էլլիէրի աախի Սուլթանըն հուզուրընա գապուլ օլընտըլար. Պու էլլիէրին կէօր-տիւկիւնէ նազարէն Սուլթանըն սըհէթի պէրքէմալ ըմըլ:

— Սօֆեատա իճրա օլընճագ շէնլիքլէրէ իշթիւրաք իթմէք ի-իչիւն Սուլթանա վէքեալէթէն պիր վէզիր կէօնտէրիլըճէկի շա-յի օլտու:

— Սթանպօլտաքի պուկար էք-սարքը Ամէն. Ժօզէֆ սրբազան հազրէթլէրի նամընա Սօֆիա մէ-թրօքլիտի իշթիւրաք իտէճէք տիր:

— Թարաֆէյն մուրախասլար վտսիթասը իլէ պիր վագըթտան պէրու թիւրք վէ Պուկար հիւ-քիւմէթլէրի պէյնիստէ ճէրէան իտէն միւզէքէրաթ խիթամ պուլ մուշ. նէթիճէսի րէսմէն իլան ու նէշը օլընմատը իտէտէ, պաշլը-ճա շու տօրոտ ֆասլա թագսիմ օլունիյօր ըմըլ:

1— Թիւճար վէքիլէրին հու-գուզ վէ վագիթլէրինէ, քէզա միրասա բասաթթթա, իֆլասիյէ-թէ վէ կէօմրիկէ տայիր:

2— Թապաւար հագընա Պուկարիա թէշկիլ օլընտըլը էսնտտէ վէ Բուճէլի շարգիւնի պիրլէշտիկի հէնկեամտա Պուկա-րիատա պուլունան պիւթիւն միւսիւմանլարը թիւրքիա պուլ-կար թապատսը թանըյաճագ տըր:

3— Միւթթէհէմլէրի թէսլիմ իթմէք խուսուսընտա իթիւրաֆ հասըլ օլմուշ քի՝ եալընըզ Սուլթանըն վէ եա Բրէնիւն էօմրիւն սուիգասթ էտէնլէր թէսլիմ է-տիլսին:

4— Իսլամ մէքթէպլէրի վէ միւթթիլէր իշիւն իթիւրաֆ հա-սըլ օլմուշ Պուկար հիւքիւմէ-թի թիւրք մէքթէպլէրէ իանէ-սինի տէվամ էտէճէք տիր:

— Եունան հիւքիւմէթի Մա-քէթոնիյա կիրմիշ օլան պիւ-թիւն զապիթլէրին՝ տէվլէթլէ-րին իտտասսը իւզրէ կէրի շաղըր-տը, իթաաթ իթմէյնլէրէ գաչագ նազարը իլէ պագաճտգտըր:

— Սամօս առասընըն հիւքիւ-մէթի չօճուզլարըն Կաթուիկ մէքթէպլէրի կիթմէլէրին մէն էտէն պիր գանուճամէ թէր-թիպ էթմիշ օլտըլընտան, Ֆը-րանսա էլլիսի շէտիտէն փրօ-

թէսթ իտէյօր Սամսոն պէյի մէշքիւր գանուճամէյի էլան թաստիգ էթմէմիշ տիր:

— Աճէմ սինօրը մէսէլէսին-տէն տօլայը թիւրք ասքէրլէրին կէրի շէքիլմէլէրի իշիւն մէճիսի վիւքէլա պիր մաշպաթա Սուլթանա թագաթիմ էթմիշ իսէ տէ, էլան իրատէ սուտուր էթմէմիշ տիր:

ՏԱԽԼԻԷ

Ֆէլս. Բրենս Ֆէրտինանտ հազ-րէթլէրինին ճիւլուսընըն շէն-լիկլէրի իշիւն 3000 տալէթ-նամէլէր տաղըլմըլ րէսմի զաթ-լարտան մատա՝ Ժիմնասթիկ չիւքէթլէրի թագաուտար, ար-թիւթլէր վէ պիսիքլէթ շէր-քէթլէրի տալէթ օլունմըլլար տըր: Գազալարտան տալէթ օլընանլար շըմէնտըֆէր իշիւն էօտէմէյէճէքլէր վէ Սօֆիատա օնլարա սաքին օլմագ իշիւն եհրլէր թէրթիպ իտիճի պիր գօմիսիօն նասպ օլունմուշ տըր:

— Գէօրլէր իշիւն Սօֆիատա թէէսիս օլընմըլ օլան մէքթէպի կէնիշլէտմէք արզուսը իլէ պիր զաթ 10,000 ֆր. իանէ վատ իթ-միշ տիր:

— Պիր թագըմ պէլճագալը սէրմայէտարլար վարնա պէլէ-տիյէսինէ միւրսճաթլէ, շէհրի-միզի էլէքթրիք շալգլարը իլէ թէնվիր վէ սօգազլարըմըլտա էլէքթրիք թրանվայլարը թէ-էսիս իթմէք իշիւն իմթիաղ իս-թէմէք էքթմարընտա ըմըլլար:

— Թ. Բագարճըքտա, Խասքէօյ-տէ, Տօպրիշտէ Ջըրտաթ (չիֆթճի) մէքթէպլէրի վէ վիտիտէ վէ Գէօտտէնտիլտէ պաղճը մէքթէպ-լէրի աշըլաճագ սէպտէմէր 1 տէն իթտիպարէն, իշպու, մէք թէպլէրտէ եալընըլ քէօյլիւ եա րէչպէր չօճուզլարը գապուլ օլը նաճագ, պունլարըն մէքթէպի իպթիտաիյէի իքմաղ իթմիշ օլմալարը շարթ տըր:

— Պուկարիատա Վրէնսէս նա-տէթտա իսիմտէքի քէօմիւր մատէնիտէն չըգան քէօմիւր-Լօյտ վաթօր չիւքէթի թարաֆըն տան մաւայէնէ իլէ թէճրիւպէ իտիլմիշ օլմաղլէ, րէք գուզէթլի վէ ալ թիւթիւնլիւ տէյիւ թէ-պէյիւն օլունմուշ, վէ մէգիւր չիւքէթ մատէնտէն չըգան պիւ-թիւն մալի գօնթուրաթ իթմէք իսթէմիշ տիր:

— Պուկարիատա խալը իմալը իշիւն թէշքիլ օլունմըլ օլան սին-տիգանըն գարարը իւզրէ, Բանա-կէօրիւշտտէքի խալը մէքթէպի-նին ուսթասը Մ. Բ. Պօղոսեան պիր մըլտար էնվաի խալըլարլէ Բարիգէ, Լօնտրայա վէ նիւ Եօր-գա կէօնտէրիլէճէք տիր: Իշպու եօլճուլըգտան մագսէտ շու տըր քի՝ Ֆրանսատա, Ինկիլթէրատա վէ Մ. Ամէրիկատա պուկար խա-

լըլարը սարֆ էթմէք իշիւն մէք-քիւր շէհրլէրին թիւճարլարը իլէ մուխապէրէ վէ միւնասէ-պաթ հուսուլա կէթիւրսին:

Մ. Պօղոսեան եօլա չըգմազտոն էվլէլ իմալ էթտիլի խալըլարը Բանակէօրիւշտէքի գըզ կիմնա-զիասընտոտ սէրկիյէ գօյմագ ֆիք-րինտէ իմիշ:

— Չարիվա-Լիվատա Կապրօվա շըմէնտըֆէր խաթթը իշիւն փը-լան եափըլմըլ օլուպ, միւզաէ-տէսի Հոկտեմբեր 3տէ իճրա օ-լունճագ տըր: Պու խաթթ թըրնօվա-Պօրուչիցա-Սթ. Չալօրա խաթթընա պիր գօլ օլաճագ տըր:

ՃԱԲՈՆ ՎԷ ԳՕՐԷԱ

Ճափօն տէվլէթի Գօրէա իմ փէրաթօրընա ճէպր իսթիմալը իլէ շու շտրթլաուլէ իթիւրաֆ կէթիւրմիշ տիր: Կէօեա պունլար իլէ Գօրէանըն սէրվէթի թէրազ-գըսը վէ էհալինին մէսուտիյէ-թի թէէմին օլունճագ ըմըլ:

1— Գօրէա հիւքիւմէթի իս-լահաթ իճրասը իշիւն Ճափօն էլ-չիսինին թալիմաթընա թաթ-պիգի հարեքէթ էտէճէք:

2— Գօրէատա եիւքսէք մէ-մուրլարըն նասպը վէ աղըլ Ճա-փօն էլլիսինին րիզասընա մու-հալվէլ օլաճագ:

3— Գօրէա Ճափօնը մէմուր-մէմուրլար իսթիմալէտէճէք ճա-փօն էլլիսինին իճագէթիւնի ա-լարագ:

4— Ճափօն էլլիսինին իլն ու րիզասը ալմագսըլըն Գօրէա էճ նէպի մէմուրլար իսթիմալ էտէ-մէյէճէք: վէ սաիրէ:

Պու կիպի շարթլարլէ էլլէրի վէ գօլլարը պաղլանմըլ օլան Գօրէա էլան իսմէն իմիէրաթօ-լուգ սալըլիյօր:

ԲՈՒՍԻԱ

Բիշնէվէ եագըն Թօմասթօլ նամ մահէլտէ գարըշըքըզ վու-գու պուլմուշ տըր: Եահուտիլէ-րին պիր չօգ տիւքետնլարը խա-րապ էտիլմիշ, պիր Եահուտի

էօլմիւշ: Հիւքիւմէթ գօր հալ իլէ-ասայիլի իպգա էթմիշ:

— Վէթէրսպուրկայա կաղէ-թանըն մուհարրիթի Չարըն էօմ-րիւնէ սուի գասթ էտէնլէրին մուհաքէմէսինէ տայիր պիր պէնտ եաղտըլը իշիւն 3,000 րուպ-լի ճէզարի նագտիյէյէ մահքիւմ օլտու:

— Բէթրսպուրկա եագըն պիր շըմէնտըֆէր գաթարը հայտուտ-լար թարաֆընտան հիւճուճա թէսատիւթլէ, գաջիէրտէն 14,000 րուպլի զասպ օլունմուշ տըր: Եօլճըլար իւզէրինէ աթէշ էտիլ-տիկիւնտէն իքիսի եարէլէնմիշ: Հայտուտլար գաշմըլլար:

— Թիֆլիզտէ ճինայէթլէր էկ-սիլմէտիկի սէպէպլէ, վալի պիր էմիրնամէ նէշը իթտի քի՝ հէր-քիմ թէքթէրէսիզ սիւհա թաշըր իսէ տէրտէնթ օլունճագ. գարշը գօյանլարը վէ գաշանլարը տէր հալ վուրուպ էօլտիւրմէք իշիւն սսքէրլէր վէ բօլիսլէր մէզուճ տըրլար: Ժինայէթի կէօրիւպ բօ-լիցիայա եարտըմ իթմէյէնլէր ճէզաղաճագլար. քէզա ճէնայէթ մահէլինտէ պուլունան էվլէր, տիւքեանլար տախի ճէզայա տիւ-շար օլաճագլար:

Ի Է Ճ Ա

Էլան կաղէթա պէտէլինի էօ-տէմէյէն ապօնէլէրիմիղէ րէճա իտէրիլ քի՝ պիւա թէէլսիթ պօրճ-լարընը կէօնտէրսինլէր: զիրա պու սըրա մալիւմ օլան սէպէպլէ մուալէնէթէ միւհլթաճըլ:

Գէօլլէրտէ պուլունանլար Ս. Աստ. ուճաճին Եօրթուրը միւնասէպթիլլէ շէհրլէրէ էնմէլէրինտէ:

Սիլիստրէտէ Տ. Ա. Սարգիսեանա Տօպրիշտէ Տ. Ն. Սիսակեանա Շուճլուտա Տ. Բ. Գէօսէեանա էօտէմէլէր րէճա օլունուր:

Издатель: Д-ръ М. Торосианъ
печатня Д. Тодоровъ С-но — Варш

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՄԱՔՈՒՐ, ԱԺԱՆ ԵՒ ՇՈՒՏ

ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻՆ

Վերաուճըյի խմբագրութիւնը յանձն կառնէ տպագրական ամէն տեսակ գործեր:

Հարաւեկեան հրաշիրագրեր, Նամակագրութիւններ, Մահազդներ, Այցաքարտեր, Յայտարարութիւններ, Հաշտեքողութիւններ, եւայլն պատրաստել մեծ խնամքով և չափաւոր գներով:

Տպագրական զարգացործերու համար սկսած են հասնիլ նոր եւ ընտիր տառեր:

Խմբագրութիւնս իր տրամագրութեան տակ ունի նաեւ Պուկա-րերէն և Ֆրանսերէն գրեր ամէն տեսակներով:

— ԾԱՆՁԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ՓՈԽՈՎ ԿԸ ԿԱՍՏՐՈՒԻՆ —

— ԳԸԱՐՈՒՄԸ ԿԱՆԻՍԻԿ —